Դատարանը, նկատի ունենալով նաև, որ քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ դատական ծախսեր առկա չեն, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության՝ ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/10 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված՝ Մովսեսյան ՍՊԸ-ի հայտը 1, 3, 10-րդ չափաբաժինների մասով մերժելու, և նույն չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած համարելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ